

Գ

Յ Ե Ի Ե Ր

Դող.—Ուզունլարում Ա. Մ. որ երկար ժամանակ դողացնում էր, մի անգամ, երբ կամենում էր մածուն ուտել, դղում է, որ դողը պիտի բռնի, նայում տեսնում է, որ դողը դղալի վրայ նստած է, կամացուկ այդ դղալի մածունը լցնում է կողքը գրուած մորթէ պարկի (տաւարջուկ) մէջ և բերանը կապում։ Իսկոյն պարկն սկսում է դողացնել, իսկ ինքը բոլորովին ազատում է այդ հիւանդութիւնից։

Հարինքի հրեշտակ.—Օձսնում մի պառաւ պատմում էր. Մի օր մեզ մօտ մի ծերունի հիւր եկաւ, որ իւր ասելով տասերկու տարի շարունակ հարինքի հրեշտակներին ման էր ածել. նա ասում էր, թէ դրանք ամենից առաջ դետնափոր, աղբատ տներն էին մտնում։ Միայն սև շներից ու սև կատուններից խոյս էին տալիս։ Երբ ներս էինք մտնում, նրանք զրնում ծալքի վրայ նստում էին և ինձ հրամայում, որ այդ տնից ուտելիք և ըմպելիք մատուցանեմ իրենց։ Ոչ նրանց և ոչ ինձ մարդիկ չէին տեսնում, ես մօտենում էի սփռոցին և եղած ամենալաւ բաները վերցնում տալիս սրանց։ Երբ ուտում կշտանում էին, հանում էին իրենց մօտի մատեանը և սկսում տան անդամների անունները գրել։ Ուս անունը աջից ձախ էին գրում, նա միայն հիւանդանում էր, իսկ ուս անունը ձախից գէպի աջ էին գրում, նա մեռնում էր։ Երբեմն իմ սիրելիների անուններն էլ էին ընկնում այդ մատեանը և երբ ես տեսնում էի, որ ձախից աջ են գրել՝ խնդրում, աղաչում էի, որ դոնէ աջից ձախ գրեն, սակայն նրանք պատասխանում էին, թէ «եազըլան փողուլմազ» (զրուածը չի ջնջուի), և ձեռների գաւազանով խփում գլխիս։ Եյդ միջոցին ես ցաւ չէի գգում, սակայն նայեցէր, թէ որպիսի սպիներ են մնացել այդ հարուածներից։

Ես իմ աչքերովս տեսայ նրա գլխի սպիները, հաստատեց պատմող պառաւը, էլ լինչպէս կարող էի կասկածիլ նրա ասածների վրայ։

Ժաղիկը. — Զնոդնեցի մի կին պատմում էր, թե տասն տարի առաջ գիշերները երկու պառաւ ինձ դուրս էին կանչում, գլխիս մի սև բան գնում, և ձեռիս գեղնաւոյն փոշի ամուսնեմ այլևս չէի կարողանում տանը մնալ, շարունակ շրջում էի և այդ փոշին շաղ տալիս սրա նրա վրայ, Առաւօտ շատ վաղ միևնոյն պառաւներն գալիս էին ինձ մօտ, վերցնում գլխիցս սև բանը, ես խսկոյն տուն էի վերադառնում։ Յետոյ նկատում էի, որ ում վրայ այդ ինձ տուած փոշուց ամէլ եմ ծաղիկ է հանել։

Մի կին, որի բոլոր երեխաները մեռել էին ծաղիկից, իւր տաշտաքերանքի ժամանակ, երբ ծաղիկը գալիս է գիւղը, վերցնում է իւր մէկ հատիկին և հեռանում գիւղից, որպէսզի ծաղիկը նրան էլ չը տանի։ Գնում է, գնում, վերջը նկատում է, որ մի ամայի տեղում մի ծուխ է բարձրանում, Գնում է ներս մտնում, տեսնում մի պառաւ նստած։

Սա Գարբիէլ հրեշտակապետի մայրն է լինում, այն ժամանակներում Գարբիէլ հրեշտակապետը դեռ եւս երկրիս վրայ էր ապրում։ Այս պառաւը հարցնում է այս կնոջը, թե ո՞վ է և ո՞ւր է գնում, ուս էլ պատմում է, որ իւր բոլոր երեխաները ծաղիկից մեռել են, այժմ իւր տաշտաքերանքը առել, նրա երեսից փախել է։ Երեկոյեան Գարբիէլ հրեշտակապետը տուն է գալիս, այս պառաւը ծածուկ հարցնում է նրան, թե այդ կնոջ երեխայի ճակատին ինչ է գրած, արդեօք ազատուելու է ծաղկի ձեռից։

Գարբիէլ հրեշտակապետը պատասխանում է, թե դա երեք օր ոլիտի ապրի և այնպիսի մի մահով պիտի մեռնի, որ մայրը իւր կռները կռծէ, թէ ես արի։

Այս կինը այդտեղ երկու օր մնում է, երրորդ օրը երբ պառաւը կամենում է հաց թխել, սա ասում է նրան. «Նանի, այդ հացից ես էլ եմ ուտելու, դու պառաւ ես, թող ես թըխեմ»։ պառաւը թոյլ է տալիս։ Սա հունցում է խմորը, բոկրսում գնտել։ Այս ժամանակ երեխան մօտենում է մօրը և ասում, թե մի բլիթ եմ ուզում։ Մայրը կռնով յետ է հրում, թե դէն գնայ, գեռ ժամանակը չէ։ Երեխան վայր է ընկնում

և մեռնում, խեղճ մայրն սկսում է կռնորը կռծել, լաց լինել և ասել. «Մեռնի այս կռնորը, սրանք եղան որդուս մահուան պատճառը»:

Երեխան ծաղիկ հանած ժամանակ ծնողները կիրակի են պահում, բնկույզի և սառը շաքարի փոշուց երեք մոմ են շինում և վառում, խունկ ծխում, կարմիր շորեր փռում:

«Տուր».—Երբ մինը մեռնելիս մէջքի վրայ կարմիր բծեր է ունենում, ասում են, թէ նա «տուր»-ից է մեռել, այսինքն ողինները իրենց ձեռի գաւաղանով «տուի» են (խփել են) ներան, և այդ կապոյտ բծերը հարուածի հետքերն են:

Յաւախորքին.—Երբ զերդաստանի մէջ բուն է դնում մի վարակիչ հիւանդութիւն, տնեցիներն այդ հիւանդութիւնն իրենց տանից հեռացնելու հաւատով վալտից մի փոքրիկ խորջին (բակեղաթ) են կարում և տան անդամների թուի համեմատ կենդանիներ (շիւղեր) հաւաքելով տնից՝ լցնում են նրա մէջ և տանում ծածկաբար ամփոփում դրացիներից մինի ցանկապատի մէջ: Այսպիսով ցաւը իրենց տանից փոխադրում է հարկանի աունը և իրենք այլևս չեն հիւանդանում:

Քացի սրանից ցաւը տնից հեռացնելու նպատակով շինում են երկու տիկնիկ և միմեանց կարող երեք ճանապարհների մէջ թաղում, կամ այդ տան ալիւրամանից ալիւր են վերցնում և տանում հոսող ջրի վրայ մաղում, հաւատացած լինելով, որ ցաւը սիրելով միշտ ալիւրի վրայ նստել, կարող է նրա հետ ջուրը թափուել և հեռանալ և կամ տունը լաւ աւելում են և աղբը ածում դրացու ալբահօրը: Եւ եթէ այս բոլոր միջոցները չեն կարողանում հեռացնել ցաւին տանից, խնդրում են մի որեւէ սրբի միջամտութիւնը և խոստանում, որ եթէ նա հեռացնէ ցաւը տանից՝ մի որոշ իր, օրինակ, մի կաթնայ, մի կացին և այլն, կը ծախեն և արժէքը կը նուիրեն այդ սրբին՝ մատաղ անելով: Եւ որովհետեւ սուրբը չը կասկածի նրանց ուխտի վերայ, այդ իրը տանում են դրկցի մօտ «գրաւ» դնում, և երբ ցաւը հեռանում է, իրը վերցնում, ծախում և ստացած դրամով ոչխար են գնում, մատղում, իսկ եթէ չի հեռանում, իրը նորից յետ են վերցնում:

Մոլեռանդ կանայք խաշի սէր են ման գալիս.— Երբ մի կին մի որևէ երկարատև հիւանդութեամբ տանդում է, կամ որդիքը մեռնում են և կամ սիրելիներից մինը սաստիկ հիւանդ է, նետ գնել, փալ բանալ տալով իմանում է, թէ ո՞ր խաշիցն է, ապա երեք, հինգ կամ եօթը գիւղ բորիկ ուտով հետի անցնում է և դռնէ դուռ մուրալով «խաշի փայ» հաւաքում և խունկ, մոմ, սեղանի զարդարանք, մատաղացու առնում, տանում այդ խաշին նուիրում:

Ամօթխած գեղջկուհին, որ իւր երեսը ծածկում է օտարից և խոյս տալիս մարդկանցից, այսպիսի դէպքերում մի պառւա կնոջ ուղղեկցութեամբ, սպիտակ դաթիբէն (ծածկոց) ծածկած, առանց ամաշելու ման է գալիս գիւղից գիւղ, տընից տուն և մուրում. Գիւղացիները մեծ յարգանքով են վերաբերում դէպի այսպիսի «խաշի սէր» մանեկոյնները և մեղք են համարում նրան ողորմութիւն չը տալը:

Բայց երբ սրբերի միջամտութիւնն էլ ցանկալի հետեանքը չի ունենում, և ցաւերը յամառութեամբ շարունակում են մնալ տանը, հետևում են Գ—ի և Բ. քահանայի օրինակին.— Օձուռնում Գ.ի անասունները վարակիչ հիւանդութեամբ բրդնուելով սկսում են կոտորուիլ. Գ. մի կով է մատղում, գոմում մոմ վառում, խունկ ծխում, որպէսզի «աղար ման» ամող հրեշտակներին աչքը քաղցրանայ իւր վրայ ու թողնեն գնան. Սակայն բոլորը զուր է անցնում և կոտորածն աւելի ևս սաստկանում է. Այս ժամանակ Գ. սաստիկ կատաղում է, վերցնում է մի ահագին մահակ և անասելի հայհոյանքներ ուղղելով այդ հրեշտակներին, սկսում է ուժգին հարուածներ տալ պատերին, առաստաղին և անկիւններին. Հետևեալ օրը կոտորածը դադարում է. Միևնոյն ժամանակ հարևան պառւաը գալիս ասում է, թէ ինքը նոյն գիշերն երազում տեսել է, որ տաճկական հանդերձներով չորս հոգի, ձեռներին տէգեր բռնած, դուրս են եկել դրանց գոմից. Պառւաը հարցրել է դրանց թէ ովքեր են և ո՞ւր են գնում, նրանք էլ պատասխանել են, թէ իրենք «աղարի հրեշտակներն» են, և զղուելով Գ—ից, գնում են Բ. քահանայի տունը. Նոյն իսկ նրանցից մինը

ցոյց է տուել պառաւին Գ—ի հարուածներէց վիրաւորուած զուլթը:

Մի քանի օրէց Բ. քահանայի անասուններն էլ են ըսկըսում կոտորուել և սա լսելով պառաւից նրա տեսած երազը, աւելի զօրեղ միջոցի է դիմում այդ անկոչ հրեշտակներին իւր գոմից հեռացնելու: Մի մեծ կրակ է վառում զոմի մէջ տեղը, եօթը շամփուր փոփոխակի տաքացնում և կոխում պատերի, առաստաղի ծակերն ու անկիւնները:

Հետեւալ օրը նոյն պառաւը պատմում է, թէ կրկին տեսել էր հրեշտակներին մի ուրիշ զոմ փոխադրուելիս, և թէ զցանցից երկուսը կուրացել էին հնարագէտ քահանայի տաք շամփուրից:

Ս Ր Բ Ն Ր

Մովսէս.—Սա Սինայի լեռան վրայ Աստծու հետ խօսելուց յետոյ սաստիկ հպարտացել է, թէ իրենից արժանաւոր մարդ չը կայ աշխարհում, որովհետեւ ինքը միայն արժանի եղաւ Աստծու հետ խօսելու: Բիշ յետոյ սարից իջնելիս ճանապարհը կորցրել է և գնացել իւր ժողովուրդից բաւական հեռացել: Վերջապէս մի ծերունու է պատահել և ասել ներքան. Ես Մովսիսի ժողովուրդից եմ, ցոյց տուր ինձ նրա երկիրը: Ծերունին պատասխանել է, թէ Մովսիսի երկրի մասին առաջին անգամն է լսում, լաւ կանէ որ գնայ իւր մեծ եղբորը հարցնէ, թե՛րեւս նա զիտենայ: Մովսէսը գնացել է նրա մօտ, սակայն սա ևս ոչինչ լսած չէ եղել այդ երկրի մասին, ուստի և ուղարկել է ամենամեծ եղբոր մօտ: Եւ երբ Մովսէսը միևնոյն խնդիրը սրան էլ է արել, սա պատասխանել է, թէ Մովսէսի անունը երբէք լսած չէ, սակայն կարող է ամպերից իմանալ: Ապա ցած է կանչել ամպերին և հարցրել է նրանց, թէ ո՞րն է Մովսիսի երկրի վրայ անձրև տեղացնում: Մի փոքրիկ ամպ ասել է, թէ ես եմ տեղում: Այդ ժամանակ ծերունին պատուիրել է այդ ամպին, որ նրան տանի այդ երկիրը: